Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐՓԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի ԹԻՎ 34 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 34 որոշման նախաբանում ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» թիվ 1477-Ն որոշմանը կատարված հղումը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջին, համաձայն որի հղումները կատարվում են հստակ և ուղղակի: Որոշման նախաբանում «1477-Ն» բառերից հետո գրառված «որոշմամբ» բառն անհրաժեշտ է փոխարինել «որոշման» բառով, որից հետո պետք է հղում կատարել ՀՀ կառավարության վերը նշված որոշման համապատասխան դրույթին:

Բացի այդ, որոշման անբաժանելի մաս համարվող հավելվածի 5-րդ և 14-րդ կետերը չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» թիվ 1477-Ն որոշման 2-րդ և 3-րդ կետերի պահանջներին, համաձայն որի արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու վճարի չափը սահմանվել է տվյալ արոտավայրի, խոտհարքի տակ գտնվող հողամասի հողի հարկի դրույքաչափին հավասար:

Կատարող՝ Շ. Շաքարյանց
05.08.2020թ.